ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացած՝ ՀՀ Գեղարքունիք մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի անդեզիտաբազալտային օգտակար հանածոների հանքավայրի շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2025թ-ի փետրվարի 19-ին, ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի անդեզիտաբազալտային օգտակար հանածոների հանքավայրի շահագործման նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Հանրային քնարկումների հայտարարությունը հրապարակված է եղել <<Առավոտ>> օրաթերթի՝ 2025թ-ի հունվարի 15-ի հերթական համարում:

Հանրային քնարկմանը մասնակցում էին, Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական՝ Ալիկ Եղիազարյանը, Ակունք բնակավայրի վարչական ղեկավար՝ Նիկոլա Խաչատրյանը, բնակավայրի բնակիչները և <<Անդեզիտ բազալտ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝ Էդգար Գասպարյանը:

Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական Ալիկ Եղիազարյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև խոսքը փոխանցեց հանրային լսումների կազմակերպման պատասխանատու՝ <<Անդեզիտ բազալտ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝ Էդգար Գասպարյանին:

Էդգար Գասպարյանը ողջունեց մասնակիցներին և իրազեկեց, որ քնարկվող նախագիծը՝<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ենթակա է փորձաքննության, որի համար նախատեսվում է՝ 2 հանրային լսում:

<<Անդեզիտ բազալտ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Էդգար Գասպարյանը քնարկման մասնակիցներին տեղեկացրեց, որ հանքավայր գտնվում է Ակունք բնակավայարի հարավարևելյան հատվածում, բնակավայրից՝ 4Կմ հեռավորության վրա, զբաղեցնում է՝ 20հա(հեկտար) մակերես:

Հանքավայրի տարածքում իրականացվում են աշխատանքներ պարզելու համար հանքավայրում առկա օգտակար հանածոների որակական և քանակական պարամետրերը, որոնք կբավարարեն՝ խճի և ավազի արդյունահանման նորման:

Քնարկմանը մասնակից բնակիչները իրենց հուզող հարցերը ուղղեցին՝ <<Անդեզիտ բազալտ>> ՍՊ ընկերության ներկայացուցչին.

Հարց.՝

- Որ բնակավայրից են լինելու շահագործվող հանքավայրի աշխատողները:

Պատասխան.՝

- Հանքավայրի շահագործման դեպքում կստեղծվեն նոր աշխատատեղեր և առաջնահերթություն կտրվի Ակունք բնակավայրի բնակիչներին:

Քնարկմանը մասնակից բնակիչները ողջունեցին նախաձեռնությունը:

Բնակիչների կողմից առարկություններ չհնչեցին և Ալիկ Եղիազարյանը ավարտեց քնարկումը:

Քնարկումների վարող և պատասխանատու՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական Ա. Եղիազարյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝

<<Անդեզիտ բազալտ>> ՍՊԸ տնօրեն Է. Խաչատրյան